

ԴՐՈՒԱԳ Ա.

2. Եւ ի բաժանելն³ զթագաւորութիւն Արշակունւոյն յերկուս, առ ի հնազանդեցուցանել զկողմն արեւմտից աշխարհիս Յայոց՝ թագաւորին Յունաց ընդ իշխանութեամբ իւրոյ տէրութեանն, եւ զկողմն արեւելից խոնարհեցուցանելով դառն եւ բռնաւոր ծառայութեամբ՝ արքային Պարսից՝ երթեալ այնուհետեւ նախարարքն⁴ Յայոց ի վիճակէ մասին արքային Պարսից՝ ինդրէին իւրեանց թագաւոր ըստ բնիկ նախնի կարգին⁵ յազգէն Արշակունեաց: 2 Եւ արքային Պարսից Շապիոյ կատարեալ զհայցուածս նոցա՝ շնորհեր նոցա թագաւոր խոսրով անուն յազգէն Արշակունեաց:

3 Քանզի նախագոյն⁶ թագաւորն Յայոց Արշակ ունէր միահեծան զթագաւորութիւնն ի վերայ ամենայն աշխարհիս Յայոց: 4 Իբրեւ ետես, թէ խախտեալ քայքայեալ⁷ մատնեցաւ ի բաժանումն մեծ իշխանութիւն թագաւորութեան ազգին իւրեանց՝ մեծաւ տրտմութեամբ խռովեալ տարակուսեր յանձն իւր. տեսանէր նախ զանկանելն⁸ ընդ լծով ծառայութեան երկուց թագաւորաց զաշխարհս Յայոց. եւ դարձեալ՝ զմեծ մասն, զլաւն եւ զպիտանին եւ զարզաւանդն աշխարհիս Յայոց ունել ի բաժին արքային Պարսից. քանզի թէպէտեւ հասեալ բազում գաւառք այլ ի ժառանգութիւն մասին թագաւորին Յունաց՝ սակայն համեմատէին այն միայն Այրարատեան⁹ գաւառին: 5 Խորհուրդ բազմածուկի հանդերձ իւրովք սիրելեալք ի մէջ առեալ թագաւորն Արշակ՝ մտայոյզ լինէր ի սիրտ իւր ասելով. «Թէպէտ երբեք¹⁰ մինչեւ ցայժմ կամ հակառակութեամբ կամ սիրով եղեալք մեք ընդ միմեանս՝ զգացուցեալ¹¹ էր մեր նոցա գործով պատերազմի, որպէս եւ պարտ էր ճանաչել առն զվիրձ միւսոյ եւս լաւագունի քան զինքն. եւ թէ խոնարհեալ դիպեալք ի սեր առ միմեանս՝ սակայն եղբայր լինեալք հաշուեալ նոցա, պատուով եւ զահակցութեամբ ըստ կրօնագոյն մասին, եւ ոչ բնաւ անկեալք ի բաժին՝ զանուն ծառայութեան ստացեալ կրեալք յանձինս: 6 Իսկ այժմ, յաղագս ցասու-

1 ՁԱտ. չիք Դրուագ Ա.

2 ԲԶ. լուսանցքում՝ գլխ. Ա.

3 Ձ. նախ՝ բաժանելն. նոր գրչով անելացրած՝ ի

4 Ձ. եւ նախարարքն

5 Ձ. կարգէն

6 ԲԶ. որ նախագոյն

7 ՏՏ. եւ քայքայեալ

8 Ձ. զանգանելն

9 Ձ. նախ՝ արայրատեան, ապա՝ ուղղած այսպէս

10 ԲԳտ. այստեղ եւ յետոյ միշտ՝ երբեք

11 Ձ. զգայացուցեալ